ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ.011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ.փոստ: secretariat@mineconomy.am
Վեբկայք: www.mineconomy.am

Ձեր №

«Հետաքննող լրագրողներ»
ՀԿ-ի նախագահ,
«Հետք» թերթի խմբագիր
պարոն Է.Բաղդասարյանին

Հարգելի պարոն Բաղդասարյան,

Ի պատասխան Ձեր՝ ս.թ.հուլիսի 2-ին ՀՀ էկոնոմիկայի նախարար Տիգրան Խաչատրյանին ուղղված ներդրումային ծրագրերի վերաբերյալ հարցմանը՝ հայտնում ենք հետևյալը.

Պետական կառավարման համակարգի մարմիններից և մասնավոր հատվածից հավաքագրված ներդրումային առաջարկներն ու ծրագրերը կենտրոնանում են ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում, որտեղ գույքագրվում են դրանց կարիքները, իրականացման ընթացքը, բացահայտվում են խոչընդոտները, ինչպես նաև հստակեցվում են պետական օժանդակության գործիքակազմի շրջանակներում աջակցություն տրամադրելու հնարավորությունները: Մշտադիտարկման արդյունքում բացահայտված և ամփոփված տեղեկատվությունը շաբաթական պարբերականությամբ ներկայացվում է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը հանդես չի գալիս որպես այդ ծրագրերի նախաձեռնող կամ մշակող, ուստի իրավասու չէ տրամադրելու մասնավոր ընկերությունների կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ այնպիսի մանրամասներ, որոնք պարունակում են առևտրային գաղտնիք: Ձեր կողմից հայցված տեղեկության մի մասը չի գտնվում նախարարության տրամադրության տակ, և/կամ հաճախակի մասնավոր նախաձեռնողների կողմից նման ցուցանիշների հաշվարկման անհրաժեշտություն չի առաջացել:

Անդրադառնալով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից գույքագրվող ներդրումային առաջարկներին՝ տեղեկացնում ենք, որ ներկայումս նախարարությունն իրականացնում է ինչպես օտարերկրյա, այնպես էլ տեղական ներդրողների կողմից ներկայացված շուրջ 2.8 մլրդ ԱՄՆ դոլար ընդհանուր ներդրումային արժեքով 59 ծրագրի մշտադիտարկում: Դրանցից 42-ը իրատեսական կամ կարճաժամկետ կտրվածքով ներդրումների իրականացման հնարավորություն ունեցող ծրագրեր են (շուրջ 1.1 մլրդ ԱՄՆ դոլար արժողությամբ), իսկ 17-ը՝ նախնական կամ երկարաժամկետ կտրվածքով ներդրումների իրականացման հնարավորություն ունեցող ծրագրեր (շուրջ 1.7 մլրդ ԱՄՆ դոլար արժողությամբ):

Ծրագրերը հիմնականում մշակող արդյունաբերության (14 ծրագիր՝ շուրջ 1025 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ), կառուցապատման (14 ծրագիր՝ շուրջ 699 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ), էներգետիկայի (5 ծրագիր՝ շուրջ 435 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ), զբոսաշրջության (5 ծրագիր՝ շուրջ 207 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ), ենթակառուցվածքների (4 ծրագիր՝ շուրջ 170 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ), տեղեկատվական տեխնոլոգիաների (4 ծրագիր՝ շուրջ 54 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ) և այլ ոլորտների են: Նշենք նաև, որ պարբերական մշտադիտարկման արդյունքում, վերոնշյալ ծրագրերի ցուցակը համալրվում է նոր առաջարկներով, աշխատատեղերի քանակը և ներդրումների ծավալը ճշգրտվում են փաստացի տվյալներով:

Հարգանքով՝

ԱՎԱԳ
ԱՎԱՆԵՍՅԱՆ